

զտնուի կ'ընդունիմ, իսկ եթէ ոչ՝ կը նախընտրեմ Անգոնաստեոսիոն՝ որ զոնէ կոյրութեան իմաստ չի տար: Լաւագոյն է Տարրականութիւն ըսել եւրոպացւոց նըման՝ յանուն Տալթոն երեւելի տարրազէտի՝ որոյ վրայ ուսումնասիրուած է առաջին անգամ այս հիւանդութիւնն:

10°. Keratodermie համար կարծաւ մորթորիւն կ'առաջարկէք փոխան Եղեւրանորթորիւն որ ճիշտ թարգմանութիւնն է, աւելի կարճ համարելով զայն: Նախ վանկերու և տառերու թուօք համարժէք են և թէ սխալ մը կ'ըսէք առանց մտաբերելու թէ կարծաւմորթորիւն բառն իր տէրն ունի արդէն Sclérodermie, sclérose:

11°. Այս տանեակ բառերու վրայ թոյլ տաք խնդրեմ, Ազնի բարեկամ, յաւելուլ հատ մ'եւս, Dégénérationն զոր Այրասկրում կը թարգմանէք Ձեր այդ գրութեան մէջ՝ առանց յիշատակելու իմ որդեգրածն Վատասերումն որ աւելի համապատասխան է: Այլասերումն աւելի գանազանման գաղափար կու տայ, և ոչ երբէք դէպ ի վասն փոփոխման՝ ինչ որ կը նշանակէ Dégénérationն, ուստի և առայդ Վատասերումն կը նախընտրեմ:

Եմ և մնամ ջերմ յարգանքօք Ձեր բարեացակամն:

ՏՕՐԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԱՆ

ԳԻՆԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ

Ա.

Հեղինակներու հմայիչ խորութիւններն ուրիշ բան չեն եթէ ոչ՝ հարիւրիմ յիսուծը՝ մթութիւն. իստեակ և անմարդ գաղափարներ են մեծաւ մասամբ անոնք որ խոր կը դատուիմ, մինչդեռ չկայ արդ և փայլուն կերպով բացատրուած գաղափար որ որ շատերէմ իրեւն ուսմկական չլաւ տուի: Քանիմի՞ր իրենք չհասկցաններուն վրայ կը հիւսնամ:

Բ.

Հմտութիւնը համեարիմ Ոկատմամբ է այմ՝ ինչ որ ակնոցը աչքերուն համար: Բայց ինչպէս այմ՝ որուն աչքերը տկար են ակնոց կը գործածէ, այսպէս այմ որ համեար չունի՝ գիտութեանց համարաբանոց մը կը կարծէ ունեմալ: գիտութեամբ հոսացող զուլթներէմ ունեմք հաւկիկ կը նմանիմ, որ որչափ նիւրիմ այմչափ կը կարծեմանամ:

ԿԱՐՏԷԼԻ

ԱՐԴԻ ՅՈՒՆԱՑ

ԳԵՐԵՋՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՊՈՒԹԻՒՆԸ

(Ճարուծ. տես էջ 78)

Հանգարտ և համակամ տրտմութիւն մ'է Ստեփաննոս Մարգարիթիա Չանթեցիի երգերէն միոյն բնորոշիչ շեշտը, հոսանդուն ու թեթիւ ներդաշնակութեամբ երգ մը՝ իտալական եօթնեակներուն նման:

Որդեկացս հետ, լռիկ՝ ծաղկանց արտաշնչու. թննէմ անուշահոտուած պայծառ առաւօտ մը, ամցայ դաշտերու մէջէմ, Գերեզմանատուն հասանք, և յոգեմած՝ մտտեցամ հոն. քիբերս արցունքներով կ'ողողուէիմ, և ծեռքերս երբեմն երեմ կը սրբէիմ զանոնք, Ներք որդիներս ըսիմ իմծի. — չայրիկ, պիտի դառնամ՝ թէ միմակ պիտի կենաս գերեզմանատունը. մեմք տուն պիտի երթամք, — որդեակներս, պատասխանեցի իրեմց, ես ձեզի կ'ըմկեմք, Գիտի գայ սակայն որ մը՝ յորում չըրտեմիս ալ գիւղէմ գերեզման պիտի վերադառնամք, չոս քիչ մը կեննալէմ վերջ, արտասուակից աչքերով, դուք մորէմ պիտի երթաք գիւղ տանող ճամբէմ, իսկ ես՝ համար, թմրած, ամզգայ, հոս պիտի հանգչիմ յաւիտեանս:

Այժմեան Յունաստանի էն գողտրիկ բանաստեղծներէն մին է Գիեօ Ռանգաթէ, որ իր բանաստեղծական տուրքէն՝ դամբաններու և ցաւի ալ նուիրեց: Արձակի վերածներ իր ամենաբաղդը եղերեղու. թիւններէն մին, որ այլարանական ձեւի տակ՝ կը ցուցնէ մեզի թէ որչափ դիւրարեկ և վաղանցուկ են երկրաւոր յօժարու. թիւնները՝ դամբանէն ալ անդին, ու թէ ինչպէս մոռացութիւնն և հանդիմանքը աւարգութեամբ կը ջնջեն տխրութեան արտասուքը: Այս համառօտ եղերեղու. թիւնը որդական քերթուած մ'է:

Հոգի մը ժամանակէմ առաջ կը թողուր ցաւոց երկիրը, Գիշերմ հագլի թէ արծկած էր իր երեւմոսի մագերը, և ազատ սիրած էր երկնքիմ մէջ իր ամեմարտ աստղերը, փայլում ծառազայթմե. ըով աղամանոցիմ, հոգիմ՝ մորէմ մ'սիկ ըմպու համար մայրիմ ձայնիմ, և իր սիրելիներուն մէջ՝ առանց տեսնուելու՝ քամի մ'արցունք թափելու համար, երազ թեւերով կտրեց անցաւ ամեցը միջոցը, զգուշամալով որ թիւերը երկմքի բոց. ըուն մէջ լայրիմ, խտացած խաւարը պատեր էր հայրենական տունը, և հիւսիսային հովը կը հաւ.

րուածէր տեքնազուրկ ոսոխները, Մէլ մ'ալ տը-
խուր ծայրով մը մէջ ռուն, և փայտերը որ կը
լատուէին կրակարանին մէջ գէշ գուշակութեամբ
մը ճարձմանցեամ, շրկու կանթիկներու փոքրիկ
րոցները կը լուսաւորէին դազաւ մը, լուսով մա-
նագայթ մը ափուելով դէպիկ մը՝ և հոպէմ խլուած
ծողկի մը բաժանիմ վրայ. իսկ մարմնով շուր-
ջը՝ ազգականներն ու մըրծաւորները ամբիթիւ
կու լայնի. Մեմնաթիւնին շշմէիմ մ'անցաւ իրենց
գուլիկներու վրայէն, և հոգին՝ զոր անագորոյն
բախտը խառ էր կենամբէն՝ գաղտնաբար մօտե-
ցաւ ամոնց, ճանչցաւ սպաւոր պատմաբնիմ մէջ
իր տօգոյն դէմքը, և ըսաւ. — Ազատեցար փե-
շապէս կիւրէ, ո՞վ թշուառ ... — Ու կը տեսնէ,
— ո՞վ ցաւազին տեսարան, — կը տեսնէ իր մայ-
րը՝ որ յուսահատութեամ մատնուած, դիակը
ընդգրկած, անոնատու ասէրքը դէպի երկինք
կը բարձրացնէր, առանց մտիկ ընելու իր աղա-
յանքներով. ու կը տեսնէ, աւա՛ղ, կը տեսնէ
մառն իր հայրը որ կը ձեռնէ, և իր արծաթեայ
մագիրէ գլխուն վրայ դրուած ցաւի բեռին տակ
կը ձուկ, կը հիւծէր. կը տեսնէ որ իր անոնը
քայլը կը հսկէր, և իր այտորուն վարձողիմ դա-
լարութիւնը կը տօգոյնէր. հորքայինքը կը խա-
լայիմ ու կը կուռէին փորքիկ անկանիմ մը մէջ,
և կը մեղադրէին իրենց քայլը՝ վասն զի ուրիշ
անգամներ իրենց տղայական աշխուժութիւնը
զգայած էր, Քէշ ատենէմ կերպարաբաւ հոգին.
երկրը իր ցուրտ գերեզմանով կը ծածկէր իրեն
անգամները, որոնք մինչև մարմնով ամենամեղ-
քին չիղիղուն մէջ կը զոգզոյային ցուրտէն, հիւ-
սալային հոմի պաղ փշումէն. Առջի օրերու
դիմը ցաւը՝ մեծ լացի փոխուած էր. Ծաղկե-
ցած զարման սիրուն օրերը, և հայրենի տունը
առաջնակամ պէս կենդանացաւ, հոգին՝ ուրիշ ան-
գամ մ'ալ եկաւ, շիր որ երկրին կը մօտենար՝
ուրախութեամբ շատայնք և քաղցրաձայն երգի
լսեց, Հայրենի տունը ողորուած էր լուսով, և
ուրախութիւնը կը տրիւր. քարդ ի քարդ վար-
դերը կը տարածէին իմ իրենց ուրուումը. Քոյր-
քը, գիւղեցուլութեամ շողջողուն ամենմ առաջ
ինքզինքը, և յոյժմէն պարիւրու յորձանքին,
Մ'այրը միայն կը ծածկէր ժպիտով մը իր մեր-
քին ամոնութիւնը, հոգին՝ լուռ՝ լացաւ, կը թիւ-
նոր ուղղեց դէպի երկինք, և ցաւազիմ՝ չուղեց
այլուս երկրի վրայ ինքն, ամենելով աստղերէ
պնծուած ճամբաներէն.

**Մահը երգող ուրիշ փափուկ բանա-
տեղծ մ'ալ Աղբիւլէս Փառասիրոս է, այժ-
մանն Յուն ամենամանծ քնարերգակ բա-
նաստեղծներէն մին. Հիւսայի է նա՝ հոգ-
ւոյն ամենաքաղցր զգացումները բացա-
տրելուն, և գերազանց՝ ցաւի բանաստեղ-
ծութեան մէջ. Փառասիրոս կը սիրէ կանա-
քի և մահուան միջև հակադրութիւնը. իր
քնարականներուն մէջ մայրական սիրոյ
համառօտ քերթուած մը կայ, զոր մայր
ըն կը զեղու որրորդի քով, և որ ամառ-
անի կրնայ կուշիկ կանաքի նուազ. Ոճ
, ԿՍՏՈՒՄԱՅԱ մ'է, ԿՍՏՈՒՄԱՅԱ—կրգ մը, որուն մէջ**

**հոգւոյն հառաչները կը խառնուին ծաղիկ-
ներու անուշահոտութեան հետ:**

Զու արծաթափայլ որրորդիկ մէջ, փորքիկ
հրեշտակը իմ, ո՞րքայ ուրախ եմ գրեզ քաղցրիկ
երգերու մըմուկմերով որրորդուս. Ըսէ՛ ինձի,
կ'ուզե՛ս որ երգեմ քեզի ճշմարտ, և կ'ալ խաղա-
րած աղջկան տարը, զոր ուրիշ անգամներ մայրս
կ'երգէր իմ որրորդիս քով ... Զմացի՛ր, ո՞վ
սպիտակ յասմիկ, ո՞վ հատուրիկ թիւերով
թշուշիկ. որդեակ իմ, ո՞րքայ ուրախ եմ քեզ
մօտ երգելուս. Անուշիկ մեղեդիներ հաւաքած եմ քեզ
քեզի համար. Ամէն տեքնախիտ ծաղի և ամէն
ծաղիկ բաժակիմ մէջ՝ մերգաշման խօսք մը, ազ-
նուական մտածութիւն մը գտած եմ գրեզ որո-
ւելու համար. Անտառակցիւնուն մէջ, սոքորուս
առջև իմկող ծիղերթւմ, յասմիկներու բուրուէմ՝
զուրեք՝ ոտամալորներ ժողդիցի. Վտալմներու
քով՝ տեխալմերէն գոցցալ իրենց ամէնմ ինչ.
կրայիկ գեղգեղանքները. սակայն, որդեակ, ա-
մենագեղեցիկ քանաստեղծութիւններ իմ սրտէս
կը հոսին. Սքանչելի է կարքաւ որ կը թուի ամ.
տառախիտ գաւի և վայրկեան վրայէն. գեղեցիկ
է ծովուն փրփուրը, կը մըրմկնէ ափունքի,
քայց իմ հրեշտակիս դե՛ն աւելի գեղեցիկ է,
աւելի՛՛՛ ճերմակ է խանձաւորքը որ իմ սիրոյս
պտուղը կը կապէ. Զմացի՛ր, մայրիկիդ քով,
քնացի՛ր, քնացի՛ր, ո՞վ սրտիս հատոր. քնացի՛ր,
ո՞վ ասող որ զիշերները կը փայլիս. քնացի՛ր,
ո՞վ մարդ, որ դեռ փակուած ես կոյնով մէջ.
Հումը գունձ մտիկ կ'ընէ, և կարծես կ'ըսէ իմ.
ծի. «Կ'ալ հոս սիրունիկ մէկը՝ փաթթուած իր
ծիւնէն աւելի սպիտակ խանձաւորքն է մէջ». —
Եկո՛ւր, ո՞վ քուն, եկո՛ւր շրջապատէ՛ գիւնը բա-
զուկներովդ, սեղմէ՛՛ կուրծքի վրայ, զոցէ՛՛ որ-
դեկիս աշխուշ լիւրերը, քայց մ'օր թող՝ ամոր
հրեշտակային երազները դիտելը.

**Սակայն քիչ են կանաքի բարախումնե-
րով լի բանաստեղծական շարագրութիւն-
ները: Փառասիրոս միշտ իր ճիւղատնէա-
կան՝ այսինքն հանդարտ և համակամ տը-
խրութեան եղանակին կը դառնայ, իրեւե-
րեանկան զգացում՝ շատ գեղեցիկ կ'ե-
րենայ մեզի իր բանաստեղծական ազօթ-
քը առ Տիրամայրն. աղօթողը մայր մ'է,
որուն որդին մահամբձ է:**

Ո՞վ կոյտ իմ սիրելի, ո՞վ տխրադէմ կոյս, կու
զամ դարձնալ քու մեծաւոր մատուցիկդ, քեզ
յայտնելու համար հոգիս տազմապնծող ցաւը.
Դու լաւ գիտես, Տիրուհի՛, որ քեզմէ գաւ ուրիշ
մէկը չունիմ. Ո՞վ մարդկութեան Մայր ... ինձի
օգնութեան հասիր, սիրէ՛՛ վրաս քու շնորհք-
ները. Աղբիւլ հիւսմը է, և կը վախեմ որ մեռ-
նի. Ո՞վ երկնաւոր թաղարկ, լուսաւոր քոզ երկ-
րիս, քու ոսկեղէն պապիկը այս վայրկեանիս
ինձի՛ միայն կը մայր. Ո՞ճ, ինչպէս ուրիշ ան-
գամներ ինձի հետ չեկաւ աղբիւլ կամթղեցող
վառիկու, զոր հիմայ մարած կը տեսնեմ, ո՞վ
դշխու, քեզի ո՞վ խուկ պիտի բերէ այս միայն.
Մոլեթամ մէջ, եթէ իմ Մարիամիկս մահուան
աւար երթայ ...

Ո՞վ ամուշակ Տիրամայր, ես չիմդեցի բժշկ-

մերում օգնութիւնը . Քեզի դիմեցի Մարիամիկին անողջութիւնը հայցելու . Աղէ՛, կը պաշտօնաւոր քու որդւոյդ առջի հայեացքին , իր մախիկն ծախտիմ , իր ոտըք մամկնութեամ համար . կ'ապուշեմ քեզի՝ իր ծանրաբեռն խաչին , փշեպսակին համար . կ'ծարձորցնեմ զքեզ որ Մարիամիկն պիտի աւուրցացնես և մահուանէ պիտի ապաւանս .

Հա՛ւա , ստուգեացոր դիմքը , ո՛վ զգաւաւմ Տէրաժոն . կամթիւ մը պիտի վառեմ քու պատկեւիդ դմնաց , իր ամծիմ չափ մեծ , իր հոգւոյմ քիչ պայծառ , պատկեր մը՝ որ քու դիմացդ փայլի ինչպէս իր բերքը . Ծմ , ստուգեացոր դիմքը . շնորհքը թող առողջացնէ զիմքը . Չեմ , չեմ ուզիր Մարիամիկին մահը .

Ո՛վ թագուհի , եթէ երբեմն հոտաւտ ծաղիկ . մեր ընծայած եմ քեզի , եթէ երբեմն քու պատկերիդ առջի խոսկի վառած եմ , եթէ երբեմն , ո՛վ ամենասուրբ Դշնիկ , արտասուած եմ աս . տոածայիմ Որդւոյդ վշտերը մտառնելով , տուր ինձ ա՛յնչափ աւելի՛ որչափ որ զստիկն քու աւուրցող կը կրէ , տո՛ր ինձի կենաց թաթը արմատը՝ Մարիամիկին ծաշակն սալու համար , որպէս զի մահը զիմքը իր բազուկներուն մէջ չխղզէ .

Իսկ նկատմամբ ոճի կայտառութեան , պատկերներու վառվռունդութեան և յուզման սաստկութեան , բացատրուած՝ հիանալի ուսանաւորներով՝ Փառասիրտի բանաստեղծութիւնը ամէնէն աւելի սրտառուէն է : Արձակ թարգմանութիւնը բնագրին տգոյնացուն է միշտ : Ուսանաւորի վերնագրին է ՏԵՆԱՆՆԻՐ .

Կ'ուզէի հորս զերեզմանը բնայլ , ձեռքերովս փորել հողը որ զայն իր ծածկէ , արեւու լոյսիմ համըն դազողը . կ'ուզէի սեսնիլ թէ զիմքը ի՞նչ բրած եմ այնչափ ժամանակի վերջ իր հողէ ծածկողը և իր զիշերումս աղչամուղջը . կ'ուզէի բռնուծ գրկապնդել իր ցուրտ ոսկրները , կուրծքս կուրծքիմ , գլուխս գլխիմ համզնգննել .

Կ'ուզէի պատանք մ'ըլլայ իր մարմինը փաթթելու համար . կ'ուզէի բարձ մ'ըլլայ իր յոգնած գլուխը իր բունիւր . կ'ուզէի իր քնափութեամ ասեմ՝ պատանանկութեան ոսկեզօծ երազմ ըլլայ . կ'ուզէի իր մօր աղօթքմ ըլլայ զիմքը շնորհացնելու համար . կ'ուզէի ըլլայ իր կենդանութեամ աւտեմ ըրած քարիքը , և իրմով միխթարուած որբերուն աղօթքը .

Կ'ուզէի երկիմք ըլլայ , զիմքմ իր ծոցմ ընդունելու . կ'ուզէի ըլլայ արթայտութիւնը , զիմքը իր լուսով ողորդելու . կ'ուզէի ըլլայ սպիտակ ամպ մը , զիմքը ինձ հետ տանելու , կամ մայիսի զով , քաղցր սիրքը՝ զգուհեանք համբոյցը ամբողջ տալու համար . կ'ուզէի ըլլայ աստուան ասաղիք՝ իր մագլղմ արծաթագոծելու , կամ Դոյն Մարիամու ամենասուրբ ժպիտը՝ ամօր սիրտմ հանգստացնելու համար .

Կ'ուզէի ըլլայ իսպ մը զիս ամշարով կցեցնելու համար ինձ՝ իր շիրմիմ վրայ , կամ երկնի շաղը՝ իր զերեզմանիմ հողը թրջելու համար . կ'ուզէի ըլլայ սաղարթախիտ ծառ մը՝ իմ ստուերին

միխթարութիւնը տալու ամօր , կամ սոխակ մը՝ իմ երգովս զիմքմ որորնելու , կամ ծաղիկ մը՝ քու սուտիս զիմքմ զմայնեցնելու . կ'ուզէի ըլլայ իր շիրմիմ մշտալառ կամթիւղը . կ'ուզէի ըլլայ մոյթ թեմք շիրմիմ , զիս ազատելու համար միայնու ինքեմ ցուէն .

Վերջացնենք Նոյն բանաստեղծին եղբերակութեամբը , որ հիանալի տողերով կը նկարագրէ հակադրութիւնը որ կայ աշխարհի ուրախութեան և ցաւի , օրիորդի մը մահուան և բարեկենդանի աղմկայոյզ գուարճութեանց միջեւ : Չեմ տեսած իտալական քնարականին մէջ բանաստեղծական երգ մը , որ ասուէ աւելի դուրս ցատկեցնէ մեր կենանքի ողբալի հակադրութիւնը . և պիտի փափագէի , ո՛վ աղջիկներ՝ , որ անոր յիշատակը տողորուի սրբտեքնուդ մէջ , և ձեր այդ առատագեղ մանկութեան ժամանակ՝ ձեր ժպիտը մեղմէ Նա՛զադտի արցունքով մը , որ կը տեսնուի արտեւանունքի ծայրէն .

Աղջիկ՝ որ՝ ոսկեգիսակ մագրեր փառւ . ուսեւում , սովզույն՝ ինչպէս դիզմած տերեւ մը՝ կը մնում խոր զիշերումս մէջ , իր զարմուրած բերքերը չորս կողմը կը զխտն . կարծես թէ իր շունչն հետ՝ խոյս կու տայ հոգին անդամներէմ , իսմբած վարդի մը մնամ՝ այս եր գարննէ մօրը , և հոտաւտնքով մը կ'ըսէ . « Կը մննիմ՝ ես , սիրելի՛ մայրիկ » . Մի՛ն մոյթ ժամանակ վարը մամբում մէջ կը հմչեցնեմ քարեկնդանի ուրախութեան թմբակները , և անցորդները չեմ հարցնիմ թէ արդեօք հոգեկալարք է մէկը .

Ո՛վ հոգի , երբ կը թողուս թշուառ մարմինը , երբ մահը կը յափշտակէ զքեզ մեր սրտի աչքը . ըէն , ու կը բարձրանաս մինչեւ շրթուներ , և կ'իջնես մորէն մինչեւ սիրտը , այդ ժամուն կապարի և քարի չափ ծանր ես , Դու կը վախճան մտածելով ամենաթի գաւառներում մէջ խաւար . չուտ ծամբարդութիւն մը ... Երբ հոգի մը կ'իշնայ մահուան սիրտներում մէջ՝ քարեկնդանի թմբակները վաշտը նմ լռեմ , և անցորդները զսպել ծիծաղեմ ...

Աղջիկի՛ իր յոգնած գլուխը կը համզեցնէ քար . ձերում վրայ . երկու վատոյձ ձեռքերը կ'իյնան կուրծքիմ վրայ . թուրեկի մը պէս շունչ կ'առնէ , և թռչնիկ մը պէս ալ կը մարի . կը հասկնայ որ մահուան ծախս հասած է , և իր աչքերը օգնութիւն կը խնդրեն . Մայրը՝ դողդոջում՝ զիմքը կը սեղմէ իր բազուկներում մէջ , քայք մահը կը յաղմէ մայրենի բազուկներում մէջ անգամ . Միւս կողմէն վարը ծամբում մէջ կը հմչեցնեն քալեկնդանի թմբակները , և ամբողջ հոնկէ կ'ամ . ցնի՛ .

Յամկարծ աղջիկը՝ տգոյն՝ վեր կը ցատկէ՝ արծաթեայ լուսնի մմամ . « Ո՛վ է ամ որ ինձի կը մայի , վախճանելով մը կը զօնէ , ո՛վ է այդ

1. Յարգելի և հուռ բանասէր Հ. Փաւստիկը՝ կարգացած ըլլալով այն ճառը վաթսրանի մը մէջ՝ հոս ազ-

ջեկներուն կ'ուզէ իր խօսքը , ինչպէս բնականօրէն կ'ազդէր Նաեւ յաշնդ օրինակ :

քարքարոս մարտիկը, այդ տարաշխարհի երկ-տասարգը, որ ձեռքերում մէջ շողողացող սուր մ'ուծի, և յամբերը կը պռստէ... Ամշարժ՝ երկմբմի գեղեցկութիւնը կը ցուցնէ ինծի, ետ ճամբէ գիծը, Մայրիկ, ետ ճամբէ, վասն զի վրաս տիրել կ'ուզէ. իսկ վարը դեռ կը ճնշեցնեն քարեկեղանի թմրուկները, և ճամբէն ամբողջ-մեր կ'երգեն լորուստ եղանակները:

Գատուհանէն կը տեսնէ հրդեհի աղօտ լոյսը, Ախմէջիմ կը հասնի թմրուկներում դրնդիւնը և կը շարունակէ տխրակցի. «Խնդիւն արդեօք աշխարհիս ուրախութիւնը կը բրձէ կուրծիս... ա. մէնք ալ կը վայելեմ, ես միայն կը մեռնիմ, կը զոցեմ աշխրոս, երբ դեռ տասնըվեց տարեկան չեմ եղած: Օգնութեան հասարկ ինծի, մայրիկ, օգնութեան, և ապրե՛լ տուր ինծի»: Դու կը լռէ. զը հեծեցնեն քարեկեղանի թմրուկները և ամ-ցորդները կ'երգեն պիղծ եղանակներ:

— «Մայրիկ, երբոր քարեկամս գայ, եթէ իր հոգիմ վշտացած է մահուանս վրայ, ըսէ՛ իրեմ որ ժողովը բլրոյն փոքրիկ ծաղիկները, և ամոնց-մով շիրիմս զարդարէ: Շատ երջանիկ էի երբ իրեն հետ միասին զանոթը կը քաղէի... ու եթէ իր սէը շուտով կը շիջանի, թող չմոռնայ եր-բեմն գալու գերեզմանիս պաղ քարիմ քովը՝ Այս՝ միակ ու վերջիմ շմորհքն է զոր կը հայցեմ իրմէ»: — Այսպէս կը խօսի, իսկ վարը ճամբում մէջ կը ճնշեցնեն քարեկեղանի թմրուկները, և անցորդ-ները չեն հարցնիր թէ արդեօք կա՞յ մէկը մա-համբո՛ւ:

Մէյ մ'ալ յամկարծ՝ կը լսուի կէս գիշերուամ տխուր ժամը. չուրի կը սուլէ ծախ կողմի պա-տուհանէն, զը լսուի ոտնածայնի մամնաթիփի-ւնները. դուրը կը բացուի առանց մէկու մը զբա-չելու: Կէս գիշեր է... օտարականը հասած է, զը լսուի ամենատկար հառաչանք մը, որ օգիծ մէջ կը կորսուի... մայրը մնացել է սիմանկ, ա-ռանց իր աղկան... քարեկեղանի թմրուկները չեն դաղեցնիր իրենց թծիւնը... Այսպէս է աշխարհ... հոս կ'արքայանում, հոն կը ծննա-ղիմ:

*
* *

Յուցուցի ձեզ, ո՛վ աղջիկներ, արդի յոյն ճնարականին քանի մը ակունքները: Չուտ քրիստոնէական բանաստեղծութիւն մ'է, ինչպէս որ ձեզ ըսի, և քրիստոնէա-կան զգացումները՝ իր դամբանական եր-գերուն մէջ աւելի կը յայտնուին իմ կար-դացած ոտանաւորներս մին այս ճառին մէջ կը վերջանայ մահուան ճանդէպ՝ քրիս-տոնեայ հոգւոյն հրաժեշտով մը: Յետա-րիւն Այո՛, ցտեսարիւն, — այս է քրիս-տոնէութեան ամբողջ բանաստեղծութեան վսեմութիւնը:

Մահէն անդին՝ նիւթապաշտութիւնը գե-րեզմանի փառութիւն և ապականութիւն կը տեսնէ միայն:

Եթէ կեանքիմ մէջ յոյսն ելաւ ի դերեւ Ձըւարթ օրերըս քեզի հետ ապրիլու, Ե՛կ միամեմը գերեզմանիմ մէջ, Նկո՛ւր:

Հոն իրարու հետ փրտտիմք:

Յտեսարիւն, կ'աղաղակէ քրիստոնեայ բանաստեղծը, և գերեզմանի փառութենէն՝ հոգին շուշանի մը պէս պիտի բարձրանայ դէպի երկնից բարձր գաւառները:

Ռուս բանաստեղծ մը կ'երգէր բարե-կամի մը շիրմին վրայ. «Մի՛ ըսէք ինծի թէ նա մեռած է. ինծի համար դեռ ան կ'ապրի: Եթէ՛ նոյն իսկ սեղանը աւերե-րու կոյտի մը փոխուի, զոհին բոցերը կը շարունակեն լուսաւորել. թող կտորի վարդը իր ցօղունէն, նորէն կը ծաղկի. թող կտորի՛ ճնարը, իր թրթուռները դա-ձեալ կը լսուին»:

Ընդհակառակն քրիստոնէութիւնը չբա-ւականանար անդրշիրմեան կեանքը նկա-տելով իրեն սնուող բոյր մը, անցնող բոց մը, լոռը թրթուր մը: Յտեսարիւն, և այն ատեն մեր մարմնոյն խորանը՝ գեղեց-կագոյն բոցէ մ'արծարծած՝ պիտի զգենու երկնքի ծաղիկները. այն ատեն մեր հոգ-ւոյն վարդը պիտի երենայ իր փառաց պայծառութեամբը: Այն ատեն մեր սրտին ճնարը՝ նորոգուած՝ պիտի նուագէ ամե-նաբաղդը շեշտերով յարութեան երգը:

Հիթանոսութիւնը՝ Ռէա մեծ մօր ծոցին մէջ ծածկելով դիակին կարծրացած միա-ցորդները՝ կը վճռէր յետին օրհասը. «Sit tibi terra levis»: Գրիստոնեայ բանաս-տեղծին համար՝ միշտ թեթեւ է հողը, երբ կը ծածկէ իր խոնարհ վերարկուով ար-դարոց մարմինը. գերեզմաննոցը՝ ունի՛ ան-շուշտ իր տխրութիւնը. բայց կ'երգէ Գա-րիէլէի—Գալան, սպանիացի բանաստեղ-ծը՝ որ դեռ նոր մեռած է իր անհանգիստ կատարեալ հատուութեան մէջ, թէ մահը թաց և խոտաւէտ ճամբաներուն մէջ խըն-կարոյր հոսանքներ կ'արձակէ:

Շիրիմները, քրիստոնէութեան համար, ողբով ու ցառով սփոփուած սպիտակիչ չեն միայն, անոնք նախաշաւիղ են ուրիշ կեան-քի մը որ կը հաւասարեցնէ ընկերական բու-լբուր աստիճանները, և որ այլեւս ժամանա-

կին յորձանքներէն չի շրջիր, Հոգիներ՝ որ կը տանջուին, հոգիներ՝ որ կը նուազին, հոգիներ՝ որ կը յուսան, հոգիներ՝ որ երջանկութեան կը փափագին, հոգիներ՝ որ երկրիս ցաւերէն յոգնած են, հոգիներ՝ որ մարդկային չարութեան բեռին տակ ճնշուած են, նոճիներու շուքին տակ, ըստ քրիստոնեայ բանաստեղծին, իրենց շիրիմ. ներուն վրայ կը թռչտին, ու կը դիտեն իրենց ուրախութեան և ցաւին բարեկամը, ըսելով անոր Յսնսոբրին, Ս. Ամբրոսիոսի գեղեցիկ բացատրութեան համեմատ, մարմնոյն գերեզմանը՝ յարութիւն առնողի մ'որորոցը կ'ըլլայ. *Tumulus corporis, incunabulum resurgentis.*

Շիրիմ որոց մ'է երկորոգ կեանքի մը,

« և այս կեանքը, — մէջ բերենք վաղիցէր մէկ տողը, — երազ մ'է, և մահը՝ զարթնում: »

Cette vie est un songe et la mort un réveil.

Յսնսոբրին, ո՛վ աղջիկներ, ահաւասիկ քրիստոնէութեան ամբողջ բանաստեղծութիւնը. սուգի մէջ բաժնուինք և ուրախութեան մէջ նորէն տեսնենք զիրար: Պիտի տեսնուինք նաեւ վշտերու սգաւոր հանդերձնիս հանելէն վերջ՝ յարութեան երգերը նուագելու համար. պիտի տեսնուինք նորէն՝ գերեզմանական և ցաւի բանաստեղծութեան վրայ ճառելնէս յետոյ, խօսելու համար կեանքի և ուրախութեան բանաստեղծութեան վրայ. բայց ինչպէս որ աւելի փայլուն է արեւուն ճառագայթը երբ կ'անցնի առաւօտեան ցօղաթուրմ մարգարիտներու մէջէն, այսպէս նաեւ աւելի մեղմ է ուրախութեան բանաստեղծութիւնը երբ համեմուած է ողբի բանաստեղծութեան խորհրդաւոր տիրութեամբ:

Հ. ԱՌԻԵԼԻՍ ՓԱՄԻՍԻՐԻ

Թրգմ. Հ. Ղ. ՏԱՅԱՆՆ

Վ Ե Ր Ջ

Գ Ը Ո Յ Գ Ի Ի Տ Ը

Առ սրբազամ Նիղոէ եպս. Դուրեան

Դրադի շարաթաթերթին մէջ (Ա շրջան, թիւ 9, էջ 103) յօդուած մը նուիրած էք «Գրոց գիտի հրաշք»-ին. անոր գոյութիւնը հաւանական չէք համարիր. որովհետեւ

1. Ներշնչուած կը թուի ան Աստուածաշնչէն և վերելչումը կ'երեւի Մովսէսի տախտակին, և այլն:

2. « Կորինթի տառամատու վկայութիւն. ներէն մինչեւ խորենացոյնը՝ ինչ ինչ կարկառուն մասեր եկած են աւելնալ այդ տեսլական գործողութեան վրայ »:

3. Ս. Մեսրոբայ յոգնատանջ մտքին համար ենթակայական պատկեր մը՝ կարող էր առարկայ մ'երեւցած ըլլալ:

Գրոց գիտի այս խնդիրը մեծազանգուած մատենագրութեան մը՝ և ամէն տեսակ ենթադրութեանց առիթ տուած է, նոյն իսկ այս պատմաբան մութի մէջ մնալով. — ընդհակառակն հրաշքի մասին՝ միայն պատմական վկայութիւնները գործածելով, իսկ գտած գրքերու մասին՝ միայն տրամաբանութիւնը, կարելի պիտի ըլլար ամենայն տակ և որոշ եզրակացութեան մ'հասնիլ, ջեր պատմական գրութիւնը առիթ կ'առնունք յայտնելու համար մեր տեսութիւնը նոյն մասին, ջանալով հայ ժողովրդեան պայծառ զաղափար մը տալ Ս. Մեսրոբայ գիտի մասին՝ և զգուշանալով մասնագիտական բախիղ մը ներկայացնել:

Գրոց գիտի հրաշքը. — Հրաշքի յիշատակութիւնը, — Ս. Մեսրոբայ կիսարթուն երազելը, քարի մ'երեւնալը և անոր վրայ անծանօթ ձեռքի մը շարժիլը ու գրելը, — առաջին անգամ կը յիշատակէ Փարպեցին, յետոյ խորենացին, յետոյ համառօտ կորիւն և այլ պատմիչներ:

Բայց Ս. Մեսրոբայ վարուց առաջին աղբիւրն է Լնդարձակ Կորիւն, որ կ'ըսէ